

## Հանրային լսումների հրավերի նամակ

Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարությունը (ԷՆ) նախատեսում է բարելավել էլեկտրաէներգիայի իր արտադրության ընդհանուր արտադրական հզորությունը, համալրելով գործող Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանը (ԵՀՇԳՑԷ-1) ժամանակակից և արդյունավետ էլեկտրակայանով: Այս նպատակով նախատեսվում է առկա ԵՀՇԳՑԷ-1 կողքին կառուցել նոր 254 ՄՎտ համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայան (ԵՀՇԳՑԷ-2): ԷՆ-ն ցանկանում է ապահովել հուսալի ազգային էլեկտրամատակարարում, թույլ տալ Հայաստանին դառնալ էլեկտրաէներգիայի հիմնական արտահանող և տեղափոխել էլեկտրաէներգիայի արտադրության բեռը պետական հատվածից դեպի մասնավոր հատված:

ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա.-ն կլինի Ծրագրի նախագծման, գնման և շինարարության կապալառուն: Էլեկտրակայանի շահագործումը կիրականացվի Արմփաուեր ՓԲԸ-ի՝ ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա.-ի դուստր ընկերության կողմից:

2017 թ. հունվարին Ծրագիրն արդեն իսկ ստացել է Բնապահպանության նախարարության կողմից ազգային բնապահպանական հաստատումը: Սակայն, ծրագրի մշակողը նպատակ ունի ստանալ ֆինանսավորում Միջազգային ֆինանսական Կորպորացիայից (ՄՖԿ) և Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ): Այդ իսկ պատճառով, 2017 թ. դեկտեմբերին պատրաստվել է ԵՀՇԳՑԷ-2 Ծրագրի վերաբերյալ Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնատում (ՇՄՍԱԳ), հետևելով միջազգային լավագույն փորձին:

Արմփաուեր ՓԲԸ-ն/ ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա.-ն ցանկանում է տեղեկացնել բոլոր հետաքրքրված քաղաքացիներին նոր ԵՀՇԳՑԷ-2-ի կառուցման և ՇՄՍԱԳ-ի մասին: Ուստի, դուք հրավիրվում եք մասնակցելու հանրային քննարկումների հանդիպմանը, որը տեղի կունենա 2018թ. փետրվարի 10-ին, ժամը 10:00-ին, «Դաբլթրի Բայ Հիլթոն Երևան Սիթի Սենթր» հյուրանոցի «Միլանո» սրահում, Գր. Լուսավորչի փող., 4/2 շենք հասցեում: Լսումներին մասնակցելու համար նախատեսված են անվճար փոխադրումներ հետևյալ վայրերից և ժամերին Այնթափի գյուղապետարանի դիմացից – ժ.09.30 Մետրոյի Բարեկամություն կանգառի՝ Հայաստան՝ հանրախանութի դիմացից – ժ.09.30

Շենգավիթի թաղապետարանի դիմացից – ժ.09.30

Էրեբունու թաղապետարանի դիմացից – ժ.09.30

Մենք Ձեզ և հանրությանը հակիրճ կներկայացնենք ծրագիրը, կխոսենք բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների մասին և կտեղեկացնենք Ձեզ բողոքարկման մեխանիզմի մասին, որը մենք իրականացրել ենք ծրագրի համար: Այնուհետև, բաց քննարկման ընթացքում դուք հնարավորություն կունենաք տալ ծրագրի մասին ձեզ հետաքրքրող հարցերը:

Տարբեր ոլորտների մի շարք փորձագետներ ներկա կգտվեն ծրագրի քննարկմանը  
և կողջունեն ձեր մեկնաբանությունները և կարծիքները:

Մեկնաբանությունները կարելի է ուղարկել

Էլեկտրոնային փոստի միջոցով՝ [info@armpower.am](mailto:info@armpower.am)

փոստով՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 10 շենք, 105 գրասենյակ

Մենք հորդորում ենք բոլոր ազգությունների կանանց և տղամարդկանց օգտվել

Ծրագրի մասին իմանալու և մեր փորձագետների հետ զրուցելու այս

հնարավորությունից: Անհամբեր սպասում ենք ձեր հետ հանդիպմանը: